

«ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՅ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ»
Պ Ո Ա Կ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՎՊՄԻ-ի ռեկտոր
_____ Գ.Կ. Խաչատրյան
“ 04 ” __ 04 __ 2012թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

**"Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան պետական մանկավարժական
ինստիտուտ" պետական ոչ առևտրային կազմակերպության**

Մագիստրատուրայի բաժնի

Ընդունվել է ՎՊՄԻ գիտխորհրդում

(արձանագր. թիվ __ 4 _ “ __ 04 _ “ __ 04 _____ 2012թ.)

Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի (այսուհետ՝ Ինստիտուտ) մագիստրատուրայի բաժնի (այսուհետ՝ Բաժին) կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) սահմանում է Բաժնի կազմակերպչական ու մեթոդական հիմքը և նրա հիմնական խնդիրները, գործառույթները, կառուցվածքը, կազմը, աշխատանքի ուղղությունները, ինչպես նաև Ինստիտուտի ստորաբաժանումների և այլ կազմակերպությունների հետ փոխհարաբերությունները:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Բաժինը հանդիսանում է Ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումը և անմիջականորեն ենթարկվում է Ինստիտուտի պրոռեկտորներին:

1.2. Բաժինը իր գործունեությունում առաջնորդվում է ՀՀ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» գործող օրենքներով, ՀՀ Կրթության և գիտության նախարարության նորմատիվային փաստաթղթերով, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007թ. դեկտեմբերի 6-ի «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը հաստատելու մասին» թիվ 1193-ն հրամանով, Ինստիտուտի կանոնադրությամբ, Ինստիտուտի գիտխորհրդի որոշումներով և սույն Կանոնակարգով:

1.3. Բաժնի աշխատանքը ղեկավարում է Բաժնի վարիչը, որը նշանակվում է պաշտոնին և ազատվում է պաշտոնից ռեկտորի հրամանով՝ համաձայն գործող աշխատանքային օրենսդրության:

1.4. Բաժինը համագործակցում է Ինստիտուտի այլ ստորաբաժանումների հետ:

2. Բաժնի գործունեության նպատակը

2.1. Բաժնի գործունեությունն նպատակներն են.

- մագիստրատուրայի ընդունելության գործընթացի կազմակերպում և անցկացում,
- մասնակցություն մագիստրոսական կրթական և առարկայական ծրագրերի ներդրման, նորացման և վերանայման գործընթացներին,
- մասնակցություն մագիստրատուրայի ուսումնական պլանների ձևավորմանը և վերանայմանը,

- մագիստրատուրայի ուսումնական գործընթացի վերահսկողություն,
- մագիստրոսական ուսուցման համակարգի փաստաթղթերի (մագիստրատուրայի ուսանողների անհատական ուսումնական պլաններ, տեղեկատվական նյութեր, կարգեր, կանոնակարգեր), մշակում և ներկայացում հաստատման
- մագիստրանտների վերջնական ատեստավորման անցկացման նախապատրաստում:

3. Բաժնի աշխատանքների ուղղությունները

Բաժնի աշխատանքների ուղղություններն են.

3.1. Կազմակերպչական գործունեություն՝ մագիստրոսական կրթության կազմակերպման և իրականացման բնագավառում:

3.2. Վերլուծական գործունեություն՝ Ինստիտուտի մագիստրոսական կրթության որակը բարելավելու, կրթական ծրագրերը կատարելագործելու նպատակով:

3.3. Մեթոդական գործունեություն՝ մագիստրոսական կրթական ծրագրերի և ուսումնական գործընթացի իրականացմանը վերաբերող մեթոդական նյութերի մշակում և ներդրում, պրոֆեսորադասախոսական կազմին անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութերի, մագիստրատուրայի ուսանողներին անհրաժեշտ տեղեկատվական-կազմակերպչական, մեթոդական նյութերի տրամադրում, անհրաժեշտ հաշվետու փաստաթղթերի և նյութերի կազմում և ներկայացում:

3.4. Համակարգող գործունեություն՝ Բաժնի վերը նշված աշխատանքների համակարգում և ուղղորդում:

3.5. Տեղեկատվական գործունեություն՝ Ինստիտուտի մագիստրոսական կրթությանը վերաբերող տեղեկատվության տրամադրում հասարակայնությանը, Ինստիտուտի ղեկավարությանը, պրոֆեսորադասախոսական անձնակազմին:

4. Բաժնի խնդիրները

Մագիստրատուրայի բաժնի խնդիրներն են.

4.1. նախապատրաստել և Ինստիտուտի ղեկավարությանը ներկայացնել ՀՀ Կրթության և գիտության նախարարության՝ ՀՀ «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» օրենքով թելադրված մագիստրոսական կրթության բնագավառին վերաբերող հայեցակարգային, տեղեկատվական և մեթոդական նյութեր, մշակել Բաժնի գործառույթների մեթոդական ապահովմանը նվիրված նյութեր,

4.2. տրամադրել տեղեկատվական և մեթոդական աջակցություն Ինստիտուտի դասախոսական անձնակազմին՝ Ինստիտուտի մագիստրատուրայում նոր առարկայական ծրագրերի, ժամանակակից կրթական տեխնոլոգիաների ներդրմանն աջակցելու նպատակով,

4.3. տրամադրել մագիստրատուրայի ուսանողներին մագիստրատուրայի ուսումնական գործընթացին վերաբերող անհրաժեշտ տեղեկատվական և մեթոդական նյութեր,

4.4. ուսումնասիրել և վերլուծել մագիստրոսական կրթության բնագավառում Եվրոպական ընդհանուր կրթական տարածքի բուհերում կիրառվող տեխնոլոգիաները՝ Ինստիտուտի կրթական գործընթացում դրանց կիրառման անհրաժեշտությունը որոշելու նպատակով,

4.5. աջակցել Ինստիտուտի մագիստրատուրայի ուսանողների և դասախոսների մասնակցությանը հանրապետական և միջազգային տարբեր կրթաթոշակային ծրագրերին,

4.6. վերահսկել մագիստրատուրայի ուսումնական գործընթացի կազմակերպումը և անցկացումը:

5. Բաժնի փոխհարաբերություններն Ինստիտուտի ստորաբաժանումների և աշխատակիցների հետ

Բաժինը համագործակցում է.

5.1. Ինստիտուտի ղեկավարության հետ՝ Բաժնի գործառույթներին վերաբերվող բոլոր հարցերով,

5.2. Ինստիտուտի հաշվապահության հետ՝ Բաժնի աշխատանքների կատարման համար անհրաժեշտ նյութական միջոցների տրամադրման հարցերով,

5.3. Ինստիտուտի ուսումնական և ուսումնագիտական ստորաբաժանումների հետ՝ Բաժնի աշխատանքային պլանով նախատեսված այդ ստորաբաժանումների գործունեության շրջանակներում գտնվող հարցերով,

5.4. մագիստրոսական ծրագրերի ղեկավարների հետ՝ մագիստրոսական կրթության գործընթացի կազմակերպման և անցկացման, բովանդակային խնդիրների հարցերով

5.5. Ինստիտուտի իրավաբանի հետ՝ Բաժնի գործունեությանն առնչվող փաստաթղթերի մշակման և ձևակերպման հարցերով,

5.6. ուսումնամեթոդական վարչության հետ՝ մագիստրատուրայի ուսումնական գործընթացի կազմակերպման և անցկացման հարցերով:

6. Բաժնի վարիչի պարտականությունները, իրավունքները, պատասխանատվությունը

Բաժնի վարիչի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը բխում են Բաժնի նպատակների, խնդիրների և գործունեության ուղղություններից և ամրագրվում են պաշտոնի և աշխատանքի նկարագրերով:

6.1. Համաձայն Բաժնի խնդիրներին՝ Բաժնի վարիչը կատարում է հետևյալ պարտականությունները.

6.1.1. պլանավորում է Բաժնի գործունեությանը վերաբերող աշխատանքները,

6.1.2. կատարում է մագիստրատուրայի ընդունելության, ուսումնական գործընթացի հետ կապված իր պարտականությունները,

6.1.3. ապահովում է Ինստիտուտի մագիստրոսական կրթության բաժնի գործունեության համար անհրաժեշտ փաստաթղթերի մշակումը, հաստատումը և վերանայումը,

6.1.4. մասնակցում է մագիստրատուրայի ուսումնական գործընթացում ուսուցման նոր տեխնոլոգիաների ներդրմանը,

6.1.5. մասնակցում է մագիստրոսական կրթական ծրագրերի մշակմանը, ներդրմանը, վերանայմանը,

6.1.6. մշտապես աշխատում է իր մասնագիտական գիտելիքները, կարողությունները և հմտությունները կատարելագործելու ուղղությամբ:

6.2. Բաժնի վարիչն իրավունք ունի.

6.2.1. գործել Բաժնի անունից, ներկայացնել Բաժնի շահերը՝ Ինստիտուտի այլ ստորաբաժանումների և այլ կազմակերպությունների հետ շփվելիս՝ սույն կանոնակարգի 2-րդ բաժնում շարադրված հարցերի շրջանակներում,

6.2.2. պահանջել Բաժնի աշխատակիցներից՝ սույն անոնակարգի 2-րդ բաժնում շարադրված գործունեության ուղղությունների որակյալ կատարում,

6.2.3. դիմել Ինստիտուտի ստորաբաժանումներին՝ անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր տրամադրելու համար,

6.2.4. ներկայացնել առաջարկներ՝ Բաժնի աշխատանքը բարելավելու և կատարելագործելու ուղղությամբ,

6.2.5. մասնակցել Բաժնին առընչվող հարցերի քննարկմանը նվիրված խորհրդակցություններին,

6.2.6. ներկայացնել առաջարկներ Բաժնի աշխատակիցների որակավորման բարձրացման ուղղությամբ,

6.2.7. ներկայացնել առաջարկներ Բաժնի աշխատակիցների խրախուսման և կարգապահական տույժ կիրառման համար,

6.2.8. ծանոթանալ Բաժնի աշխատանքային գործունեությանը վերաբերող Ինստիտուտի գիտխորհրդի և ռեկտորատի որոշումներին:

6.3. Բաժնի վարիչը պատասխանատվություն է կրում.

6.3.1. Սույն Կանոնակարգով սահմանված պաշտոնեական պարտականությունների, Ինստիտուտի ղեկավարության հրամանների և հրահանգների կատարման համար՝ ՀՀ գործող աշխատանքային օրենսդրության սահմաններում,

6.3.2. իր գործունեության ընթացքում կատարած իրավախախտումների համար՝ ՀՀ գործող վարչական, քրեական և քաղաքացիական օրենսդրության սահմաններում:

7. Բաժնի աշխատակիցների պարտականությունները, իրավունքները, պատասխանատվությունը

Բաժնի աշխատակիցների իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը բխում են Բաժնի նպատակների, խնդիրների և գործունեության ուղղություններից և ամրագրվում են պաշտոնի և աշխատանքի նկարագրերով:

7.1. Համաձայն Բաժնի խնդիրներին՝ Բաժնի աշխատակիցները կատարում են հետևյալ պարտականությունները.

7.1.1. պլանավորում են իրենց գործունեությանը վերաբերող աշխատանքները,

7.1.2. կատարում են մագիստրատուրայի ընդունելության, ուսումնական գործընթացի հետ կապված իրենց վրա դրված պարտականությունները,

7.1.3. կատարում են Բաժնի վարիչի հանձնարարությունները՝ կապված Ինստիտուտի մագիստրոսական կրթության բաժնի գործունեության համար անհրաժեշտ փաստաթղթերի մշակման և վերանայման, մագիստրատուրայի ուսումնական գործընթացի կազմակերպման, անցկացման և բարելավման հետ,

7.1.4. կատարում են Բաժնի վարիչի առանձին հանձնարարությունները,

7.1.5. մշտապես աշխատում են իրենց մասնագիտական գիտելիքները, հմտությունները և կարողությունները կատարելագործելու ուղղությամբ:

7.2. Բաժնի աշխատակիցներն իրավունք ունեն.

7.2.1. դիմել Ինստիտուտի ստորաբաժանումներին՝ անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր տրամադրելու համար,

7.2.2. ներկայացնել առաջարկներ՝ Բաժնի աշխատանքները բարելավելու և կատարելագործելու ուղղությամբ,

7.2.3. ծանոթանալ իր աշխատանքային գործունեությանը վերաբերող Բաժնի վարիչի որոշումներին և առաջարկներին:

7.3. Բաժնի աշխատակիցները պատասխանատվություն են կրում.

7.3.1. Սույն Կանոնակարգով սահմանված պաշտոնեական պարտականությունների, Ինստիտուտի ղեկավարության հրամանների և հրահանգների կատարման համար՝ ՀՀ գործող աշխատանքային օրենսդրության սահմաններում,

7.3.2. իր գործունեության ընթացքում կատարած իրավախախտումների համար՝ ՀՀ գործող վարչական, քրեական և քաղաքացիական օրենսդրության սահմաններում: